



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԵ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ, ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Ըստ ընկալեալ կարգի, Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովին տեղի ունեցած ընտրութեանց արդիւնքը օրին փոխանցուեցաւ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որ հայրապետական յատուկ գիրով, հաստատեց Առաջնորդ Սրբազանին վերընտրութիւնն ու Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան նոր կազմերուն ընտրութիւնը:

Ծանօթ է, որ Թեմիս Ազգ. Երեսփոխանական Ժողովը, իր 36րդ նստաշրջանին, 9 եւ 10 Մայիսին, չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ ընտրած էր Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանը, նաեւ ընտրած էր Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան անդամները:

Թեմիս մէջ գործող միութեանց, կազմակերպութեանց ու մամլոյ ներկայացուցիչներ եւ անհատ ազգայիններ, հաղորդակցութեամբ, այցելութեամբ ու նամակով, իրենց շնորհաւորութիւնները եւ բարեմաղթութիւնները փոխանցեցին Առաջնորդ Սրբազանին: Անոնց շարքին էր Հայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, որ իր նամակին մէջ գրած էր.- «Սրտանց շնորհաւորում եմ Ձեզ Հայ Եկեղեցու Արեւմտեան Թեմի Առաջնորդ վերընտրուելու կապակցութեամբ: Վստահ եմ, որ այսուհետ եւս նոյն եռանդով կը շարունակէք Ձեր Աստուածահաճոյ ծառայութիւնն՝ ի նպաստ հայ համայնքի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Սրբազան Հայր, մաղթում եմ Ձեզ, Թեմի հոգեւոր դասին եւ հաւատացեալներին քաջառողջութիւն, անսահման ուժ եւ կորով հետագայ հոգեւոր կեանքում»:

## **HIS HOLINESS APPROVES THE ELECTION OF THE PRELATE AND RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS**

Following the conclusion of the 36<sup>th</sup> Representatives Assembly on Saturday, May 10<sup>th</sup>, the results of the proceedings were immediately sent to His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, who approved the election of the Prelate, and the Religious and Executive Councils.

Throughout the past week, leaders of community organizations and individuals sent congratulatory letters and visited with H.E. Archbishop Moushegh Mardirossian personally to congratulate him on his re-election for a

fourth term. A letter from the Honorable Consul General of Armenia Armen Liloyan congratulating the Prelate were among those received.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 18 Մայիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

Անցեալ Կիրակի, Հոգեգալստեան տօնին առիթով, Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց Էնսիլոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ փոխանցեց իր պատգամը:



Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Զիւլ. Խաչատուրեան շնորհաւորեց Առաջնորդ Սրբազան Հայրը՝ չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ ընտրութեան առիթով եւ յաջողութիւն մաղթեց անոր: Արարողութեան ներկայ էր Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ կից «Եղիա Սարաֆեան» դահլիճին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, կազմակերպուած՝

եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ: Ներկաները շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազանը:

Հիւրասիրութեան ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներ, եկեղեցւոյ յարակից յանձնախումբերու անդամներ, շրջանի միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Տիկնանց Միութիւնը նաեւ պատրաստած էր շնորհաւորանքի կարկանդակ մը: Առաջնորդ Սրբազանի շնորհակալութեան խօսքէն ետք, հիւրասիրութիւնը վերջ գտաւ «Ուրախ Լեր»ի եւ «Կիլիկիա»ի երգեցողութեամբ:

## **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH**

On Sunday, May 18, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and deliver the sermon.

On Sunday, May 11, the Prelate presided over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and delivered the sermon on the feast of Pentecost. H.E. Archbishop Yeprem Tabakian was also present.

During the Liturgy, Rev. Fr. Razmig Khatchadourian congratulated the Prelate who just two days earlier was re-elected for a fourth term. At the

conclusion of church services, a reception took place at the adjacent “Yeghia Sarafian” Hall. Parishioners had the opportunity to congratulate the Prelate. Members of the Executive Council, parish Board of Trustees, and sister organizations were also in attendance.

The Prelate thanked the faithful for their well wishes and the conclusion came to a close with the singing of “Giligia”.

## **ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴԱՏԻ ՊԸՐՊԵՆՔԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Կիրակի, 18 Մայիսի երեկոյեան ժամը 6:30-ին, Պըրպէնքի Հայ Դատի Յանձնախումբին տարեկան ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Պըրպէնքի «Արպաթ» ճաշասրահին մէջ: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան Պըրպէնքի քաղաքապետն ու քաղաքական եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Ձեռնարկին նպատակն է Պըրպէնքի պաշտօնատարներուն եւ պատասխանատուներուն աւելի մօտէն ծանօթացնել եւ տեղեկութիւններ փոխանցել Հայ Դատի աշխատանքներուն մասին, միաժամանակ գնահատել ի նպաստ հայ դատին ծառայող Ամերիկացի անձնաւորութիւններ:

Ճաշկերոյթի պատուոյ նախագահն է՝ Ներկայացուցիչներու Տան 43-րդ Ընտրական Շրջանի ներկայացուցիչ Փօլ Գրիգորեան:

Գլխաւոր բանախօսն է Ժերակուտական Էտըմ Շիֆ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Վազգէն Թիւրք. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը:

## **ANNUAL BANQUET OF THE BURBANK ANC**

The third annual banquet of the Armenian National Committee of Burbank will take place on the evening of Sunday, May 18<sup>th</sup>, at Arbat Banquet Hall in Burbank, with the participation of elected officials, community leaders, and ANC supporters.

The honorary chairman of the banquet is Assembly member Paul Krekorian and the keynote speaker is Congressman Adam Schiff.

Rev. Fr. Vazken Atmajian will attend and convey the Prelate’s blessings and remarks.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԲԱՅՄԱՆ ԱՂՕԹԸՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ՄՏՇԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Կազմակերպութեամբ ՄՏՇ Համալսարանի Հայագիտական ամպիոնին, Կիրակի 18 Մայիսի կէսօրէ ետք ժամը 5:30-ին, ճաշկերոյթ մը

տեղի պիտի ունենայ Universal City-ի «Հիլթըն» պանդոկին մեջ: Հանդիսութեան ընթացքին, պիտի պատուուին վաստակաշատ անձնաւորութիւններ եւ հաստատութիւններ, որոնք երկար տարիներ նպաստած են հայ գաղութին:

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի ընդառաջէ իրեն ուղղուած հրաւերին, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան ու գնահատանքի խօսքը:

## **PRELATE TO DELIVER THE INVOCATION AT THE ANNUAL BANQUET OF THE USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES**

On the evening of Sunday, May 18<sup>th</sup>, the third anniversary gala banquet of the USC Institute of Armenian Studies will take place at the Universal Hilton. During the banquet individuals and organizations who have contributed to the progress of the Armenian community will be honored.

The Prelate will be in attendance and will deliver the invocation.

## **RED DOG HOWLSԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Երկուշաբթի, 19 Մայիսի երեկոյեան ժամը 8-ին, El Portal թատերասրահին մեջ, Լորթ Հոլիվուտ, պիտի ներկայացուի Հայկական Յեղասպանութեան ահաւոր պատմութենէն քաղուած Alexander Dinelaris-ի «Red Dog Howls» գործը, բեմադրութեամբ՝ Մայքըլ Փերեցեանի: Երաժշտութիւնը պատրաստած է Element խումբի անդամներէն Արա Տապանճեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Վազգէն Զիւլ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ երեկոյթին:

## **WORLD PREMIERE OF “RED DOG HOWLS”**

The world premiere of “Red Dog Howls” by Alexander Dinelaris will take place on the evening of Monday, May 19<sup>th</sup>, at the El Portal Theatre in North Hollywood. The play, which is directed by Michael Peretzian and features original music by Ara Dabanjian, tells the tale of a young man dealing with the aftermath of the Genocide.

Rev. Fr. Vazken Atmajian will represent the Prelate at the premiere.